ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 23 » հունվար 2024թ. No 338 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/332-24 առ 17.01.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 4 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի

Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Կավինտոն դեղահատեր (N 19317) և Կավինտոն ֆորտե դեղահատեր (N 19318) դեղերի գրանցման հավաստագրերը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի հունվարի « 23 » - ի N 338 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Կավինտոն	վինպոցետին	դեղահատեր	5մգ; (50/2x25/) բլիստերում	Գեդեոն Ռիխտեր-ՌՈՒՍ ԲԸ, Լենայա փ. 40, Շուվոյե, Մոսկվայի շրջան, Եգորիևսկի նահանգ, 140342- բալք արտադրող, որակի և բաց թողնման հսկող, Գեդեոն Ռիխտեր-ՌՈՒՍ ԲԸ, Լենայա փ. 43/5, Շուվոյե, Մոսկվայի շրջան, Եգորիևսկի նահանգ, 140342, Ռուսաստան- փաթեթավորող	Հունգարիա	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, Բուդապեշտ, 1103	Հունգարիա	Դ	21872 (004633) 16.01.2024
2	Կավինտոն	վինպոցետին	դեղահատեր	5մգ; (50/2x25/) բլիստերում	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Հունգարիա	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Հունգարիա	Դ	21873 (004633) 16.01.2024
3	Կավինտոն Ֆորտե	վինպոցետին	դեղահատեր	10մգ; (30/2x15/) բլիստերում, (90/6x15/) բլիստերում	Գեդեոն Ռիխտեր-ՌՈՒՍ ԲԸ, Լենայա փ. 40, Շուվոյե, Մոսկվայի շրջան, Եգորիևսկի նահանգ, 140342- բալք արտադրող, որակի և բաց թողնման հսկող, Գեդեոն Ռիխտեր-ՌՈՒՍ ԲԸ, Լենայա փ. 43/5, Շուվոյե, Մոսկվայի շրջան, Եգորիևսկի նահանգ, 140342, Ռուսաստան- փաթեթավորող	Ռուսաստան	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Հունգարիա	Դ	21874 (004636) 16.01.2024
4	Կավինտոն Ֆորտե	վինպոցետին	դեղահատեր	10մգ; (30/2x15/) բլիստերում, (90/6x15/) բլիստերում	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Հունգարիա	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Հունգարիա	Դ	21875 (004636) 16.01.2024